



«ՅՈՒՆԻԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ.....	3
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՎ ԶԵԿՈՒՅՑԸ	5
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	9
ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	10
ԲԱՆԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	12
ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ (ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	19
ԲԱՆԿԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ.....	20
<i>Հավելված 1. Բանկի վարչակազմակերպական և կորպորատիվ կառուցվածքի նկարագրությունը</i>	22
<i>Հավելված 2. Նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվություն</i>	23
<i>Հավելված 3. Խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը</i>	24
<i>Հավելված 4. Գործադիր մարմնի (անհատական կամ ընդհանուր) տարեկան վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ</i>	27
<i>Հավելված 5. Բանկի բաժնեպատկերի քանակը, որոնք հանդիսանում են խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը</i>	28
<i>Հավելված 6. Աուդիտորական կազմակերպության անվանումը և վարձատրությունը, ինչպես նաև դրա անկախության փաստի ստուգման արդյունքները</i>	29
<i>Հավելված 7. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնեպատկերով ամրագրվող իրավունքները՝ ըստ դրանց տեսակների (դասերի)</i>	30
<i>Հավելված 8. Կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկին և խորհրդին խորհրդարարական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձանց մասին տեղեկատվությունը և վարձատրությունը</i>	32
<i>Հավելված 9. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը</i>	32

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ



Հարգելի բաժնետերեր, գործընկերներ և հաճախորդներ,

2025 թվականը Յունիբանկի համար նշանավորվեց կարևոր ձեռքբերումներով և ռազմավարական նախաձեռնությունների իրականացմամբ, որոնք ուղղված էին Բանկի շուկայական դիրքերի ամրապնդմանը և հետագա զարգացմանը:

Հաշվետու տարում լրացավ Յունիբանկի IPO-ի իրականացման տասը տարին: Այս ժամանակահատվածում Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքն աճել է շուրջ 70%-ով, ինչը վկայում է հետևողական աճի, ներդրողների վստահության և բաժնետերերի համար երկարաժամկետ արժեքի ստեղծման մասին:

Յունիբանկը Հայաստանում առաջինն էր, որ թողարկեց անժամկետ պարտատոմսեր՝ 6,5 մլրդ դրամ և 9 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, և ավարտեց դրանց տեղաբաշխումը սահմանված ժամկետից զգալիորեն շուտ: Ներդրողների կողմից ցուցաբերված բարձր հետաքրքրությունն արտացոլում է շուկայի վստահությունը Բանկի հետագա զարգացման հեռանկարների նկատմամբ: Յունիբանկը 2025 թվականն ավարտել է 9,8 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթով: Բանկի խորհուրդն առաջարկել է շահութաբաժինների վճարմանն ուղղել 9,3 մլրդ դրամ:

Շահութաբերության և ակտիվների որակի բարելավման շնորհիվ Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը հաշվետու տարում Յունիբանկին շնորհեց B1 մակարդակի վարկանիշ՝ «Կայուն» կանխատեսմամբ:

Հաճախորդների համար առաջին ընտրության բանկ դառնալու ձգտումը շարունակում է մնալ Յունիբանկի հիմնական առաջնահերթություններից մեկը: Այդ նպատակով մենք հետևողականորեն զարգացնում ենք ինչպես մասնաճյուղային ցանցը, այնպես էլ սպասարկման թվային ուղիները՝ ապահովելով ֆինանսական ծառայությունների հասանելիությունը՝ անկախ հաճախորդի և Բանկի փոխգործակցության ձևաչափից: Այսօր Յունիբանկի հաճախորդ կարելի է դառնալ ամբողջությամբ առցանց՝ մոբայլ հավելվածում անցնելով կենսաչափական նույնականացում:

Արհեստական բանականության տեխնոլոգիաները մենք դիտարկում ենք որպես հետագա զարգացման կարևոր գործիքներ և շարունակելու ենք դրանց հիման վրա լուծումների ներդրումը՝ բիզնես գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Յունիբանկը ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում առաջիններից մեկն էր, որը ներդրեց արհեստական բանականության վրա հիմնված սկորինգային համակարգ, ինչը Բանկին հնարավորություն տվեց զբաղեցնել առաջատար դիրքեր POS վարկավորման շուկայում՝ ըստ ծավալի, ինչպես նաև առաջին տեղը՝ տրամադրված POS վարկերի քանակով:

Փոքր և միջին բիզնեսի աջակցությունը շարունակում է մնալ Բանկի գործունեության ռազմավարական ուղղություններից մեկը: Յունիբանկը ձեռնարկատերերին առաջարկում է համապարփակ աջակցություն բիզնեսի զարգացման բոլոր փուլերում՝ ընկերության գրանցումից և հաշիվների բացումից մինչև վարկավորում, լիզինգ, էքվայրինգ և ժամանակակից թվային ծառայություններ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ՓՄՁ ներկայացուցիչներին ստանալ ֆինանսական ծառայությունների ամբողջական փաթեթը մեկ գործընկերոջից և կենտրոնանալ իրենց բիզնես նպատակների իրականացման վրա:

Միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով Յունիբանկը հանդես է եկել որպես մի շարք նշանակալի միջազգային միջոցառումների գործընկեր, այդ թվում՝ Սինգապուրում անցկացված BAFT Asia Bank to Bank համաժողովի, Yerevan Dialogue ֆորումի, որն համախմբել էր պետությունների ղեկավարներին և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, ինչպես նաև FINTECH360 համաժողովի, որը նվիրված էր ֆինանսական ոլորտի թվային վերափոխման արդիական միտումների քննարկմանը:

2025 թվականի արդյունքներով Յունիբանկն արժանացել է Visa-ի «Strategic Partnership Award 2025» և Mastercard-ի «Excellence in Partnership Development» մրցանակներին:

Բիզնեսի զարգացման հետ մեկտեղ Յունիբանկը շարունակում է իրականացնել նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր: Բանկի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ սպորտի, կրթության և հասարակական նշանակության նախաձեռնությունների աջակցման ծրագրերը:

2026 թվականը Յունիբանկի համար հոբբեյանական տարի է լինելու: Բանկը կնշի իր հիմնադրման 25-ամյակը: Քառորդ դարի ընթացքում Յունիբանկն անցել է շուկայի նորաստեղծ մասնակցից մինչև Հայաստանի առաջատար ֆինանսական հաստատություններից մեկի ճանապարհը՝ ապահովելով գրեթե 400 միլիարդ դրամի ակտիվներ:

Հետևելով «Բանկ և ավելին» կարգախոսին՝ մենք մեր առաքելությունն ավելի լայն ենք դիտարկում, քան ավանդական բանկային սպասարկումը: Մեզ համար կարևոր է ոչ միայն ֆինանսական ծառայությունների մատուցումը, այլև մեր հաճախորդների զարգացման համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծումը և կյանքի յուրաքանչյուր փուլում նրանց ուղեկցումը:

Վստահ եմ, որ ձեռքբերված փորձը, ուժեղ թիմը և ամուր գործարար հեղինակությունը Յունիբանկին հնարավորություն կտան շարունակել կայուն զարգացումը՝ ի շահ հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների:

ԳԱԳԻԿ ՉԱՔԱՐՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ համահիմնադիր, Խորհրդի նախագահ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՎ ԶԵԿՈՒՅՑԸ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ և հաճախորդներ,



2025 թվականի մակրոտնտեսական մարտահրավերների պայմաններում Յունիբանկը ժամանակին ադապտացվեց շուկայական միջավայրի փոփոխություններին և շարունակեց ամրապնդել իր դիրքերը Հայաստանի բանկային շուկայում: Բանկի գործունեության դրական դինամիկան ձևավորվել է երկրում պահպանվող տնտեսական ակտիվության համատեքստում, որը գերազանցել է սպասելիքները և նպաստել բանկային պրոդուկտների ու ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկի պահպանմանը:

Բանկը ցուցաբերել է կայուն ֆինանսական դինամիկա՝ ներառյալ կապիտալի աճը և գործառնական ցուցանիշների բարելավումը: 2025 թվականի ընթացքում Բանկի ակտիվներն ավելացել են 16.7%՝ կազմելով 393.8 մլրդ դրամ: Վարկային ներդրումներն ավելացել են գրեթե 30%-ով՝ հասնելով 264.6 մլրդ դրամի: Պարտավորությունները կազմել են 343.6 մլրդ դրամ՝ ավելանալով 51.1 մլրդ դրամով: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 25.7 մլրդ դրամ՝ տարվա ընթացքում աճելով 70%-ով: Ընդհանուր կապիտալը կազմել է 50.2 մլրդ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 17.9%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (11%): Բանկը հաշվետու տարին ավարտել է զուտ շահույթի 9.8 մլրդ դրամ ցուցանիշով, կապիտալի եկամտաբերության (ROE) 20.1% մակարդակով, որը գերազանցում է բանկային հատվածի միջին ցուցանիշը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վարկային պորտֆելի որակի պահպանմանը և հիմնական ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովմանը: Ժամկետանց վարկերի կառավարման համալիր մոտեցումը, վարկառուների հետ ակտիվ համագործակցությունը և երկուստեք ընդունելի լուծումների որոնումն ապահովել են շուրջ 12.3 մլրդ դրամի փաստացի հետբերում, ներառյալ՝ ընդհանուր 3.5 մլրդ դրամի չափով գույքի իրացումը:

Մանրաճախ ուղղությունն պահպանել է Բանկի բիզնես կառուցվածքում իր գերիշխող դիրքը՝ կազմելով ընդհանուր պորտֆելի 71%-ը: 2025 թվականի արդյունքներով մանրաճախ վարկային պորտֆելն աճել է 24%-ով՝ գերազանցելով 183 մլրդ դրամը: Աճի հիմնական շարժիչ ուժը շարունակել է մնալ հիփոթեքային վարկավորումը, որի զարգացմանը նպաստել են հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակը և համագործակցությունը Հայաստանի առաջատար կառուցապատող ընկերությունների հետ:

Մանրաճախ բիզնեսի զարգացման շրջանակում Բանկը շարունակել է գործիքակազմի կատարելագործումը՝ քարտային ուղղությունը սահմանելով որպես առաջնահերթություն: Տարվա ընթացքում թարմացվել են գործող գործիքներն ու ծառայությունները, իրականացվել են նոր

լուծումների գործարկմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ կորբենդային և տուրիստական քարտերի, ինչպես նաև Mastercard-ի հետ համատեղ նոր նախագծերի իրականացման աշխատանքների մասով: Արդյունքում գործող քարտերի քանակը գերազանցել է 240,000՝ ապահովելով 11% աճ:

Հայկական առաջին վճարահաշվարկային համակարգը՝ UBPay-ը, հաջողությամբ ինտեգրվել է դրամական փոխանցումների շուկայում՝ ընդգրկելով երկրի գրեթե բոլոր համակարգաստեղծ առևտրային բանկերը: Առաջատար միջազգային մատակարարների՝ «URemit»-ի, «iSend»-ի և «MoneyTo»-ի հետ համագործակցությունը ընդլայնել է փոխանցումների աշխարհագրությունը՝ հնարավորություն ընձեռելով հաճախորդներին առաջարկել ծառայությունների ավելի լայն շրջանակ, շահավետ փոխարժեքներ և ժամանակակից ֆինտեխ լուծումներ:

Միկրո, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների աջակցության ռազմավարության հետևողական իրականացման և հաճախորդների բազայի ընդլայնման արդյունքում 2025 թվականի վերջի դրությամբ կորպորատիվ վարկային պորտֆելն աճել է 37%-ով և կազմել 77 մլրդ դրամ: Կորպորատիվ հաճախորդների թիվը գերազանցել է 12,600-ը, հաշվետու տարվա ընթացքում ներգրավվել է ավելի քան 1,500 նոր հաճախորդ: POS-տերմինալների վաճառքների ակտիվացման արդյունքում 2025 թվականին էքվայրինգ գործառնությունների միջին ամսական շրջանառությունը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ աճել է 31%-ով, իսկ իրականացված գործարքների քանակը՝ 61%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում լիզինգային պորտֆելը աճել է 55%-ով՝ պահպանելով ժամկետանց պարտավորությունների զրոյական մակարդակ, ինչը վկայում է պորտֆելի բարձր որակի և ռիսկերի գնահատման ու կառավարման արդյունավետ ընթացակարգերի մասին:

Սովորական (հասարակ) բաժնետոմսերի և Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկին միացել են ավելի քան 160 նոր բաժնետերեր, իսկ կանոնադրական կապիտալը համալրվել է ավելի քան 2.5 մլրդ ՀՀ դրամով, մնացած 2.9 մլրդը ձևավորվել է որպես էմիսիոն եկամուտ: Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկի սովորական բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը կազմել է գրեթե 11%, իսկ Գ դասի արտոնյալ բաժնետոմսերինը՝ 85%: Միևնույն ժամանակ, նշված բաժնետոմսերի ավելի քան 90%-ը ձեռք են բերել մանր ներդրողները, ինչը ևս մեկ անգամ վկայում է Բանկի նկատմամբ ներդրողների բարձր վստահության, ներդրումային գրավչության և մանր ներդրողների լայն հետաքրքրվածության մասին: Շարունակելով կապիտալի շուկայում ակտիվ զարգացումը և հետևողականորեն իրականացնելով ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարությունը՝ Յունիբանկը հանդես եկավ որպես անժամկետ և ստորադաս պարտատոմսերի առաջին թողարկող:

2025 թվականին Բանկը նշանակալի քայլ կատարեց կորպորատիվ կառավարման համակարգի զարգացման ուղղությամբ՝ միանալով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին: Տեխնոլոգիական ենթակառուցվածքի կատարելագործման ռազմավարության

շրջանակներում նախաձեռնվեցին տվյալների բազայի վերլուծական գործիքակազմի ներդրման լայնածավալ աշխատանքներ, բարձր տեխնոլոգիական լուծումների մշակում փոքր և միջին բիզնեսի վարկավորման գործընթացը պարզեցնելու նպատակով, ինչպես նաև ներդրվեցին գործառնական լուծումներ՝ ուղղված իրավական սպասարկման գործընթացների օպտիմալացմանը:

Աջակցելով Հայաստանում ֆինտեխ ոլորտի զարգացմանը՝ Յունիբանկը դարձավ FinTech Armenia ասոցիացիայի հիմնադիր անդամ՝ իր ներդրումն ունենալով ֆինտեխ էկոհամակարգի դինամիկ զարգացման գործում ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ միջազգային մակարդակում: Ավանդաբար, Բանկն աջակցել է Երևանում միջազգային ֆինտեխ համաժողովի անցկացմանը:

Յունիբանկի գործունեության անփոփոխ առաջնահերթությունը շարունակել է մնալ հաճախորդների նկատմամբ հոգատարությունը և բարձրորակ սպասարկման ապահովումը: Գործարկվել է հերթի առցանց ամրագրման համակարգը, իսկ Բանկի Թեժ հեռախոսակապի կենտրոնի գործառույթների ընդլայնման շնորհիվ զգալիորեն բարձրացել է հաճախորդների հետ փոխգործակցության արդյունավետությունը:

Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Բանկի, այդ թվում՝ երկարաժամկետ ավանդների վարկանիշները B2 մակարդակից մինչև B1, ինչպես նաև բարելավել է վարկունակության գնահատականը, ինչն արտացոլում է վարկային պորտֆելի որակի և շահութաբերության աճը: Բանկի կադրային քաղաքականությունը շարունակում է միտված լինել մասնագիտական և մոտիվացված թիմի զարգացմանը և ամրապնդմանը:

Բանկն իր բիզնես նպատակներին հասնելու համար սահմանել է հետևյալ ռազմավարական ուղենիշները.

- ✓ Բանկի ներդրումային գրավչության բարձրացում՝ շահութաբերության աճի, ռեսուրսային բազայի մատչելիության վրա կենտրոնացման, ինստիտուցիոնալ ներդրողների շրջանակի ընդլայնման, ինչպես նաև եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացման, այդ թվում՝ կոմիսիոն մարժայի աճի միջոցով:

- ✓ Բանկի տեխնոլոգիական հարթակի զարգացում՝ գործառնական գործընթացներում արհեստական բանականության գործիքների ակտիվ ինտեգրման, հաճախորդների բազայի խորքային վերլուծության համար ժամանակակից վերլուծական գործիքների ներդրման, ինչպես նաև թվային ծառայությունների և հաճախորդների հետ փոխգործակցության եղանակների ընդլայնման ու կատարելագործման միջոցով:

- ✓ Հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ամրապնդում՝ պոտենցիալ լսարանի և հաճախորդների հեռանկարային սեգմենտների բացահայտման, բանկային պրոդուկտներն ու լրացուցիչ ծառայությունները համատեղող համալիր փաթեթային առաջարկների մշակման միջոցով, որոնք կնպաստեն հաճախորդների ֆինանսական կարիքների առավել լայն շրջանակի

ընդգրկմանը և Բանկի էկոհամակարգում նրանց ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

✓ Կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրում՝ ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի կատարելագործման, կառավարման և հսկողական մարմինների միջև լիազորությունների ու պատասխանատվության բաշխման արդիականացման, կառավարման մարմինների արդյունավետության գնահատման միջոցով:

Որդեգրված ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև նպատակ է դրել 2026 թվականին հասնել 13.1 մլրդ դրամ զուտ շահույթի: Անկեղծորեն շնորհակալ եմ մեր բաժնետերերին և ներդրողներին՝ մեր թիմի նկատմամբ ցուցաբերած աջակցության և վստահության համար, ինչպես նաև մեր հաճախորդներին և գործընկերներին՝ Յունիբանկն ընտրելու համար: Շնորհակալություն եմ հայտնում նաև Յունիբանկի ողջ թիմին՝ եռանդուն և պրոֆեսիոնալ աշխատանքի համար: Համոզված եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ Յունիբանկը կշարունակի իր վստահ ճանապարհը դեպի նոր բարձունքներ և հաջողություններ:

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ վարչության նախագահ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐԿՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թվականի մայիսի 27-ի Խորհրդի որոշմամբ 2025 թվականի հունիսի 30-ին կայացած Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ միանալու առաջարկը: Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, որի նպատակն է կառավարման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը, ներդրողների վստահության ամրապնդումը, գործարար միջավայրի զարգացումը հաստատվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. թիվ 1955-Ն հրամանով:

Կանոնակարգին միանալը պարտադիր է Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների համար, որի վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է Բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Կանոնագրքին միացող կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար պատրաստել և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը իր կայքէջում հրապարակել Կանոնագրքով նախատեսված տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև դրա մաս կազմող կորպորատիվ կառավարման զեկույցը և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը՝ «**Հետևի՛ր կամ բացատրի՛ր**» սկզբունքի հիման վրա:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է հաստատել Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի միացումը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 90.68%

Դեմ՝ 0 ձայն

Ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

Անվավեր՝ 99.928 ձայն:

ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Բանկի ֆինանսական հաշվետվությունները հրապարակված են Բանկի ինտերնետային կայքում՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.unibank.am/hy/finance/>



Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



«ԲԵՂ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ
 Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
 Վ. Սարգսյան փ. 26/1
 «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
 Հեռախոս + 374 (10) 595 999
 Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի («Բանկ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտեր) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտերը) (ՅԷՄՍԽ կանոնագիրը), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների: Մենք կատարել ենք նաև էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների և ՅԷՄՍԽ կանոնագրի համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

«ԲԵՂ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների նույնասիրտությունով սահմանափակ մասնաձևի անգլիսերեն ընկերություն: © KPMG International Limited-ին անդամակցող «ԲԵՂ-ՓԻ-ԷՄ-ՋԻ» անկախ ընկերությունների հասնելիքային կազմակերպության անդամ



«Յունիբանկ» ԲԲԸ
Անկախ անդիտորական եզրակացություն
էջ 2

Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 4(ե), 18 և 30(բ):	
Աուդիտի առանցքային հարց	Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված անդիտորական ընթացակարգեր
<p>Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ընդհանուր ակտիվների 67%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների (այսուհետ՝ ԱՊԿ) գծով պահուստը, որը գնահատվում է կանոնավոր հիմունքով և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ, ինչպես ներկայացված է ստորև:</p> <p>Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելով ղեկավարությունից պահանջվում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված.</p> <ul style="list-style-type: none"> – պարտքային ռիսկի Նշանակալի աճի և պարտազանցման ղեկավարի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀԱՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (այսուհետ՝ ՖՀԱՍ 9) համաձայն), – պարտազանցման հավանականության և պարտազանցման ղեկավար առաջացող կորստի գնահատում, – ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում՝ 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար, – ապագայամետ տեղեկատվությունը ներառելու համար կատարված ճշգրտման գնահատում: 	<p>Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀԱՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով պարտքային ռիսկերի գծով մեր մասնագետներին:</p> <p>Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար իրականացրել ենք հետևյալ անդիտորական ընթացակարգերը.</p> <ul style="list-style-type: none"> – Իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: – Իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – Հաճախորդներին տրված վարկերի համար ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը, որոնք օգտագործվում են որպես հիմք վարկերը փուլերի միջև բաշխելու համար: – Հաճախորդներին տրված վարկերի համար, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելներ մուտքագրված տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը՝ մոդելի ելակետային տվյալները համադրելով առաջնային փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով:



«Յունիբանկ» ԲԲԸ
Անկախ անդիտորական եզրակացություն
Էջ 3

<p>2025թ. ընթացքում Բանկը հայտնաբերել և հետընթաց կերպով ճշգրտել է 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ անկախվող պարտքային կորուստների մացորդների հետ կապված սխալը, ինչը մեծացրել է այդ ոլորտի կարևորությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար:</p> <p>Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և անկախվող պարտքային կորուստների գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:</p>	<ul style="list-style-type: none"> - Վարկերի ընտրանցի համար, որոնց գծով պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատվում է անհատական հիմունքով, ստուգել ենք պարտազանցման դեպքում առաջացող կորստի հաշվարկի մոդելի ելակետային տվյալների ճշգրտությունը և տեղիս լինելը՝ համեմատելով գրավի արժեքներն արտաքին գնահատողների հաշվետվությունների տվյալների հետ և ստուգելով կիրառված գեոչերի տեղիս լինելը: - Գնահատել ենք ապագայամետ տեղեկատվությունը ներառելու նպատակով կատարված ճշգրտման համար կիրառված մակրոտնտեսական կանխատեսումների ճշգրտությունը և տեղիս լինելը՝ կրկին իրականացնելով ռեգրեսիոն վերլուծություն և համեմատելով մակրոտնտեսական տվյալները հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության հետ: - Ներգրավել ենք պարտքային ռիսկի մեր մասնագետներին գնահատելու համար անկախվող պարտքային ռիսկերի մոդելներում կիրառված մեթոդաբանությունը և հիմնական ենթադրությունները և դրանց կիրառման հետևողականությունը նախորդ ժամանակաշրջանների տվյալների վերահաշվարկի ժամանակ: - Գնահատել ենք անկախվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կատարված վերանայված գնահատումները 2025թ. փաստացի արդյունքների հետ: - Գնահատել ենք, արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները, ներառյալ նախորդ տարվա մացորդների վերահաշվարկին վերաբերող բացահայտումները, ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:
---	---

Հանգամանքի շեշտադրում. համադրելի տեղեկատվություն

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Շանթթագրություն 5-ի վրա, որտեղ նշված է, որ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվի ավարտված տարվա համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է: Մեր կարծիքը ձևափոխված չէ այս հարցի հետ կապված:

Համադրելի տեղեկատվությանը վերաբերող այլ հանգամանք

Բանկի 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվությունների (որոնց տվյալների հիման վրա կազմվել է 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը), բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից Շանթթագրություն 5-ում ներկայացված ճշգրտումների,



«Յունիբանկ» ԲԲԸ
Անկախ անդիտորական եզրակացություն
Էջ 4

աուդիտն իրականացվել է այլ անդիտորական կազմակերպության կողմից, որը համապատասխանաբար 2025թ. ապրիլի 29-ի և 2024թ. ապրիլի 24-ի իր եզրակացություններում արտահայտել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի շրջանակում մենք իրականացրել ենք Ճանաչագրություն 5-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կատարվել են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համադրելի տվյալները վերահաշվարկելու համար: Մեզ չի հանձնարարվել իրականացնել 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվությունների (որոնք այստեղ ներկայացված չեն) աուդիտ, դիտարկում կամ կիրառել որևէ ընթացակարգ այդ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից Ճանաչագրություն 5-ում ներկայացված ճշգրտումների: Զետևաբար, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստիացում չենք արտահայտում որպես մեկ ամբողջություն վերցված համապատասխան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, Ճանաչագրություն 5-ում ներկայացված ճշգրտումները տեղի են և կատարվել են ըստ պատշաճի:

Դեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Դեկավարությունը պատասխանատու է ՖՀՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ դեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե դեկավարությունը չունի Բանկը լուծարելու կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող անդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՆ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամուտոբեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՆ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք անդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում անդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի



«Յունիբանկ» ԲԲԸ
Անկախ անդիտորական եզրակացություն
Էջ 5

համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:



- ձեռք ենք բերում պատկերացում անուղիտի վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան անուղիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված անուղիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզ կից պահանջվում է մեր անուղիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր անուղիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված անուղիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք անուղիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, անուղիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի համապատասխան պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անորոշառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հարողակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների անուղիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են անուղիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր անուղիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ իրավական ակտով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի անուղիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անուղիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է այս անուղիտորական եզրակացությունը՝


Իրինա Գևորգյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի նախագահ, Ղեկավար գործընկեր

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 ապրիլի 2026թ.



ԲԱՆԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը դինամիկ զարգացող նորարարական բանկ է, որն իր հաճախորդներին մատուցում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն շրջանակ: Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, բարելավել իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակը, ինչպես նաև բավարարել բնակչության պահանջարկը որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ:

Յունիբանկը ձգտում է դառնալ ունիվերսալ բանկ յուրաքանչյուր հաճախորդի համար՝ ընդլայնելով իր գործարքների, առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների շրջանակը, առավելագույնս բավարարելով հաճախորդների պահանջները՝ ավելացնելով իր ծառայությունների ծավալը և բարձրացնելով սպասարկման որակը:

Մեր արժեքներն են.

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ,
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն,
- հասարակության վստահություն,
- հեղինակություն, հուսալիություն և կայունություն:

Մենք ձգտում ենք.

- ամրապնդել և ընդլայնել Բանկի դիրքերը ֆինանսական շուկայում,
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը,
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը,
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը,
- բարձրացնել Բանկի ներդրումային գրավչությունը,
- Բանկի ռազմավարությունն ուղղված է լինել «**ժողովրդական բանկի**»՝ որպես հանրապետության ամենատարածված ֆինանսական հաստատություններից մեկի դիրքերի ամրապնդմանը:

Բանկը որպես ռազմավարական հիմնական նպատակներ դիտարկում են՝

- երկրի բանկային համակարգում իր դիրքերի բարելավումը,
- բիզնեսի ծավալների մեծացումը՝ մասնաբաժնի մեծ շահութաբերությամբ,
- գործունեության արդյունավետության և աշխատանքի արդյունավետության ցուցանիշների բարձրացումը,
- բիզնես գործառույթների մեքենայացումը և բարելավումը,
- ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը և կառավարումը:

Զարգացման նպատակ է նաև մասնաճյուղերի և վաճառքի ուղիների զարգացումը հաճախորդների կողմնորոշման սկզբունքով:

Վերջնական նպատակ է ժամանակակից տեխնոլոգիական Բանկի ստեղծումը, որը կնպաստի հաճախորդների բարեկեցությանը և տնտեսական զարգացմանը՝ պրոֆեսիոնալ բանկային ծառայությունների ամբողջական սպեկտրի մատուցման ճանապարհով, ինչն անձնակազմին կերաշխավորի լիարժեք պրոֆեսիոնալ ինքնաիրացում, արժանի պարգևատրում և սոցիալական վստահության պահպանում, Բանկի մասնակիցներին կապահովի առավելագույն եկամուտ Բանկի բավականաչափ կայուն մակարդակում՝ գործելով օրենսդրությանը համապատասխան՝ առաջնորդվելով գործնական էթիկայի սկզբունքներով, կորպորատիվ կուլտուրայով և սոցիալական պատասխանատվությամբ:

Բանկը մշտապես հետևում է կլիմայի փոփոխությանը և կայուն զարգացմանը առնչվող միջազգային զարգացումներին, կայուն զարգացման հիմնական նպատակներին (SDG), այդ թվում՝ աղքատության և սովի դեմ պայքարին, բարձրորակ կրթության, գենդերային հավասարությանը, պատասխանատու արտադրությանը և սպառմանը միտված ծրագրերին:

ESG սկզբունքները և Կայուն զարգացման մոտեցումներն ինտեգրվել են Բանկի բիզնես գործընթացներին, կորպորատիվ ռազմավարության երկարաժամկետ փոխակերպման հիմնախնդիրներն ընդգրկվել են Բանկի կառավարման մարմինների՝ Խորհրդի և Վարչության օրակարգ: ESG սկզբունքների շրջանակի ամբողջական ներդրումը հնարավորություն կտա ապահովել Կայուն զարգացման (ապագա, որտեղ բիզնեսը զարգանում է միաժամանակ ունենալով պաշտպանված մոլորակ և հասարակություն), որպես վերջնական նպատակի, առաջընթացի, ռիսկերի և հաշվետվողականության չափումը: Ռիսկերի կառավարման համակարգ ESG-ն ներմուծելուց բացի, Բանկը հաշվի է առնելու հարակից այլ հարցերը պրոդուկտների մշակման, գնագոյացման և վաճառքների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ:

Կարևորելով միջազգային լավագույն փորձի ներդրումը և ինտեգրումը Բանկի ընթացիկ գործունեության, ռազմավարական զարգացման ծրագրում Բանկի Խորհրդի նախաձեռնությամբ Բանկում ընթանում է ESG սկզբունքների ներդրման և կորպորատիվ կառավարման մշակույթի բարելավման նախագիծ, որն իրականացվում է նաև ոլորտի փորձառու արտաքին Խորհրդատվական ընկերությունների հետ: Այն հնարավորություն կտա բարելավել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) ղեկավարությամբ մշակված և Բանկում ներդրված բնապահպանական և սոցիալական կառավարման (ESMS) համակարգը: Բանկը որպես ուղենիշային փաստաթուղթ է դիտարկում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2024 թվականին հրապարակված ԲՄԿ և կլիմայական ռիսկերի գնահատման գործիք, ռիսկ ռադար փաստաթուղթը:

Իրականացված աշխատանքների և համագործակցության շրջանակներում, Բանկը սահմանելով կայուն զարգացման համապարփակ շրջանակ՝ մշակել է «Կայուն զարգացման հաշվետվություն» և «Կայուն զարգացման ճանապարհային քարտեզ», որն ընդգրկում է 2024–2030թթ. ժամանակահատվածը: Այս ռազմավարական փաստաթղթերը սահմանում են Բանկի

երկարաժամկետ տեսլականն ու նպատակները կայուն բանկային գործելակերպի խթանման ուղղությամբ՝ ապահովելով կառուցվածքային ուղի՝ բնապահպանական, սոցիալական և կառավարչական սկզբունքները կառավարման, գործառնությունների և հիմնական բիզնես գործունեության մեջ ներառելու համար: Ճանապարհային քարտեզն աջակցում է Բանկի անցմանը կայուն բանկային մեթոդներին՝ ներդնելով բնապահպանական և սոցիալական նկատառումները որոշումների կայացման գործընթացներում, ռիսկերի կառավարման, արտադրանքի մշակման և շահակիցների հետ փոխգործակցության մեջ:

Բանկը հետևելով շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներին, վարկավորման ծրագրեր իրականացնելիս հաշվի է առնում շրջակա միջավայրի պահպանության չափորոշիչներին ծրագրի համապատասխանության փաստը և ձգտում է վարկային պորտֆելի առնվազն 80%-ը համապատասխանեցնել **«ԿԱՆԱԶ»** ֆինանսավորման չափանիշներին: Բանկը նպաստում է կանանց ձեռներեցության զարգացմանը, վարկավորում է վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ոլորտի և արտադրության արդիականացման նախագծերը:

Բանկը ոչ միայն ձգտում է հնարավորինս «կանաչ» և «էկոլոգիապես անվնաս» գործել, այլև հետևողականորեն զարգացնում է բոլոր երեք ուղղությունները՝ բնապահպանություն, սոցիալական քաղաքականություն և կորպորատիվ կառավարում: Բանկային գործի առանձնահատկությունից ելնելով՝ Բանկում շեշտադրվում է սոցիալական և կառավարչական պատասխանատվությունը, ինչը ենթադրում է բոլոր շահառուների, այդ թվում՝ հաճախորդների, աշխատակիցների, գործընկերների հանդեպ հոգատարություն: Համագործակցությունը Բանկում կառուցվում է հարգանքի և արդյունքների ապահովման վրա՝ մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման և աշխատակիցների միջև կառուցողական հարաբերություններ պահպանելու նպատակով: Բանկը ձգտում է պահպանել գործարար էթիկայի սկզբունքները՝ հետևելով գործող օրենսդրությամբ և Բանկի կողմից սահմանված նորմերին ու կանոններին:

Սոցիալական պատասխանատվության սկզբունքների համաձայն՝ Բանկը մշտապես ամենակտիվ մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը:

Սոցիալական և կառավարչական ռիսկերի առումով Բանկը հետևում է օրենսդրությամբ սահմանված աշխատանքային նորմերի պահպանմանը: Բանկում կարևորում են մարդու իրավունքների և աշխատանքի հավասար պայմանների ու հնարավորությունների ընձեռումը՝ բացառելով գենդերային սահմանափակումները: Պատահական չէ, որ Բանկում ղեկավար պաշտոնների 40%-ից ավելին զբաղեցնում են կանայք, վերջիններս ներգրավված են նաև Բանկի

Վարչության և Խորհրդի կազմում:

Բանկը ֆինանսավորում է աշխատակիցների՝ միջազգային և տեղական միջոցառումների, դասընթացների և համաժողովների մասնակցությունը, խրախուսում է միջազգային սերտիֆիկատներ և որակավորումներ ունեցող աշխատակիցներին: Բանկի աշխատակիցները և ղեկավարները մասնակցում են ESG սկզբունքների և կայուն զարգացմանը առնչվող տարբեր դասընթացների և սեմինարների, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի և միջազգային փորձագետների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումներին:

ESG ռազմավարության շրջանակներում, որպես սոցիալական հենասյան բաղադրիչ, Բանկը ներդրել է խտրականության դեմ պայքարի համապարփակ քաղաքականություն թե՛ աշխատակիցների, թե՛ հաճախորդների համար: Դրան զուգահեռ, Բանկի Անձնակազմի կառավարման քաղաքականությունները վերանայվել և արդիականացվել են՝ ներառելով ESG և սոցիալական պատասխանատվության սկզբունքները՝ առանձնահատուկ շեշտադրում կատարելով հավասար հնարավորությունների, արդարացի վերաբերմունքի, բազմազանության և ներառականության վրա:

Շրջակա միջավայրի կայունությանն ուղղված հանձնառության և կանաչ ֆինանսավորման խթանման շրջանակներում, Յունիբանկը մասնակցում է 2025-2027 թվականների անտառվերականգնման նախաձեռնություններին, որոնք մեկնարկել են Հայաստանի բանկերի միության և «Իմ անտառ Հայաստան» (My Forest Armenia) կազմակերպության համատեղ գործընկերությամբ: Այս ծրագրի շրջանակներում Յունիբանկն իր ներդրումը կունենա Լոռու մարզում նոր անտառի հիմնման գործում՝ նպաստելով կենսաբազմազանությանը և բնական ռեսուրսների պահպանմանը: Համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի հոկտեմբերին՝ առավել ամրապնդելով Յունիբանկի նվիրվածությունը պատասխանատու ֆինանսավորմանը և երկարաժամկետ կայուն զարգացմանը:

ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ (ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 1%: Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել ոչ բնականոն գործունեության շրջանակում այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:

ԲԱՆԿԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

Կորպորատիվ կառավարման նպատակն է թափանցիկության, վստահության, բարեվարքության և հաշվետվողականության միջավայրի ձևավորման միջոցով աջակցել դեպի Բանկ երկարաժամկետ ներդրումների ներգրավմանը, ֆինանսական կայունությանը, խթանել եկամուտների ավելի մեծ ծավալով աճը, ինչպես նաև նպաստել որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածությանը:

Ներդրողները և այլ շահակիցները Բանկի կապիտալում ներդրումներ կատարելիս պետք է համոզված լինեն, որ.

- Բանկը գործում է բաց ու թափանցիկ,
- ունի կառավարման և վերահսկման (այդ թվում՝ ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և հաշվետվողականության) պատշաճ համակարգեր,
- որոշումներ կայացնող անձանց փորձառությունն ու հմտությունները հնարավորություն են տալիս ընդունել Բանկի, դրա բաժնետերերի ու այլ շահակիցների շահերից բխող անաչառ ու հավասարակշռված որոշումներ, ստանձնել դրանց համար պատասխանատվություն, ապահովել Բանկի իրավական և էթիկական համապատասխանությունը:

Կորպորատիվ կառավարումը Բանկում բաշխում է լիազորությունները և պարտականությունները, որոնց միջոցով Բանկի խորհուրդն ու ավագ ղեկավարությունն իրականացնում են իրենց գործունեությունը, ներառյալ, թե ինչպես են նրանք.

- 1) սահմանում Բանկի ռազմավարությունն ու խնդիրները.
- 2) ընտրում և հսկում անձնակազմին.
- 3) օրական կտրվածքով իրականացնում Բանկի բիզնեսը.
- 4) պաշտպանում ավանդատուների շահերը, բավարարում բաժնետերերի նկատմամբ պարտավորությունները և հաշվի առնում այլ շահագրգիռ կողմերի շահերը.
- 5) համապատասխանեցնում կորպորատիվ մշակույթը, կորպորատիվ գործունեությունը և վարքն այն ակնկալիքին, որ Բանկը գործելու է անվտանգ և ապահով կերպով, բարեխղճորեն և գործող օրենսդրությանը համաձայն.
- 6) ստեղծում վերահսկման գործառույթներ:

Բանկը գիտակցում է, որ լավ կորպորատիվ կառավարումը կարող է ստեղծել հետևյալ **մրցակցային առավելությունները.**

- 1) ավելի մեծ հասանելիություն արտաքին ֆինանսավորմանը, ինչը կարող է հանգեցնել ավելի մեծ ներդրումների, ավելի մեծ աճի և ավելի շատ աշխատատեղերի ստեղծման: Այսօր ներքին և միջազգային ներդրողները հաճախ խուսափում են այն բանկերից, որոնք չեն

երաշխավորում ներդրողների իրավունքները, չեն ապահովում կորպորատիվ տեղեկատվության պատշաճ բացահայտում և Խորհրդի հուսալի գործունեություն,

2) կառավարման համակարգում անկախ, արհեստավարժ և արդյունավետ խորհուրդների դերակատարման ընդլայնում,

3) ավելի լավ օպերացիոն կատարողական՝ ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխելու և ավելի լավ ղեկավարելու միջոցով,

4) ավելի ցածր ռիսկեր,

5) բոլոր շահագրգիռ կողմերի միջև ավելի լավ հարաբերություններ, ինչի արդյունքում բարելավվում են աշխատանքային հարաբերությունները,

6) անվտանգ ու ապահով լինելով դառնալ ավելի ֆինանսապես կայուն, որն էլ մեծ նշանակություն ունի տնտեսության առողջության ու կայունության համար:

Բանկի կորպորատիվ կառավարման զեկույցն իր մեջ ներառում է **Հավելվածներ 1-ից 9-ում** ներկայացված հետևյալ տեղեկատվությունը.

Հավելված 1. Բանկի վարչակազմակերպական և կորպորատիվ կառուցվածքի նկարագրությունը,

Հավելված 2. Նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվությունը,

Հավելված 3. Խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը,

Հավելված 4. Գործադիր մարմնի (անհատական կամ ընդհանուր) տարեկան վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ,

Հավելված 5. Բանկի բաժնետոմսերի քանակը, որոնք հանդիսանում են խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը,

Հավելված 6. Աուդիտորական կազմակերպության անվանումը և վարձատրությունը, ինչպես նաև դրա անկախության փաստի ստուգման արդյունքները,

Հավելված 7. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերով ամրագրվող իրավունքները՝ ըստ դրանց տեսակների (դասերի),

Հավելված 8. Կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկին և խորհրդին խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձանց մասին տեղեկատվությունը և վարձատրությունը,

Հավելված 9. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կորպորատիվ կառուցվածքը հետևյալն է.

- ա. Բաժնետերերի ընդհանուր ժողով,
- բ. Խորհուրդ,
- գ. կոլեգիալ գործադիր մարմին՝ Վարչություն,
- դ. միանձնյա գործադիր մարմին՝ Վարչության նախագահ:

Հավելված 2. Նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվություն

Բանկի խոշոր բաժնետերը Յունիիոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությունն է (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103), որը հանդիսանում է 155,532,640 հատ սովորական անվանական բաժնետոմսերի (81.32%) և 32,010,000 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի (100%) սեփականատերը: Յունիիոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությանը պատկանող Բանկի սովորական անվանական բաժնետոմսերը տալիս են ձայնի միևնույն իրավունք:

Յունիիոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությունը հանդիսանում է Բանկի ուղղակի հսկող անձը:

Գազիկ Ջաքարյանը և Ջորջ Պիսկովը հանդիսանում են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ խոշոր բաժնետիրոջ՝ Յունիիոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերության վերջնական շահառուները և անուղղակի հսկում են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի սովորական բաժնետոմսերի համապատասխանաբար 61.4% և 19.9%-ը, և Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի 75.5% և 24.5%-ը:

Հավելված 3. Խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը



Գագիկ Տիգրանի Զաքարյան՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 09.04.1965թ.

Կրթությունը՝

1972-1982թթ. 109 դպրոց, Երևան, Հայաստան

1982-1988թթ.՝ Ավիացիոն ինստիտուտ (MAI), բարձրագույն կրթություն, ինքնաթիռաշինություն

2003-2004թթ.՝ Մոսկվայի միջազգային ֆինանսաբանկային դպրոց, պրոֆեսիոնալ թրեյդերի վկայական:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2008թ.-ից առ այսօր՝ «ՌԵԳՈՒ ԻՆՇՈՒՐԱՆԱՍ» ԱՓԲԸ Տնօրենների խորհրդի նախագահ

2001թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ համահիմնադիր, Խորհրդի նախագահ:

Փորձառությունը՝ 33 տարի:

Գագիկ Զաքարյանը հանդիսանում է Խորհրդին կից Ներդրումային հանձնաժողովի անդամ:



Ջորջ Իգորի Պիսկով՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 31.10.1963թ.

Կրթությունը՝

1987թ.-ին ավարտել է ՄԱԻ

2000թ.-ին ավարտել է Ներդրումային կառավարման և հետազոտությունների ինստիտուտը, Մեծ Բրիտանիա, «Ներդրումների կառավարում» վկայագիր

2005թ.-ին ավարտել է Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական ակադեմիան, տնտեսագիտական գիտությունների թեկնածու:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2002թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ համահիմնադիր, Խորհրդի անդամ:

2014թ.-ից առ այսօր՝ «MoneyTO» ՍՊԸ, հիմնադիր:

Փորձառությունը՝ 33 տարի:

Ջորջ Պիսկովը հանդիսանում է Խորհրդին կից Ներդրումային հանձնաժողովի, ինչպես նաև Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ:



Վարդան Գրենայի Աթայան՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 05.05.1969թ.

Կրթությունը՝

1990թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը

1995թ.-ին ավարտել է Վիեննայի Միացյալ Ինստիտուտը (շուկայական տնտեսության և ֆինանսական վերլուծության դասընթաց):

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2018թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ

2017-2018թթ.՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի նախագահի խորհրդական

2001-2017թթ.՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության նախագահ:

Փորձառությունը՝ 32 տարի:

*Վարդան Աթայանը հանդիսանում է Խորհրդին կից **Կադրերի և պարզակապրումների հանձնաժողովի** անդամ:*



Ֆիլիպ Ռենե Մարկ Դեյմոտո՝ անկախ անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 15.05.1967թ.

Կրթությունը՝

1991-1992թթ.՝ Սեն-Սիր Ռազմական ակադեմիա, լեյտենանտ

1988-1990թթ.՝ Միդլսեքս համալսարան, BA, բիզնեսի եվրոպական կառավարում

1986-1988թթ.՝ NEOMA բիզնես դպրոց, բիզնեսի եվրոպական կառավարում:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2024թ.-ից առ այսօր՝ Aix-en-Provence վերաքննիչ դատարան, դատական փորձագետ ֆինանսների գծով

2022թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ

2016թ.-ից առ այսօր՝ «POD Consulting» ընկերություն, հիմնադիր և գործադիր տնօրեն

2000-2015թթ.՝ «Կրեդի Ագրիկոլ կորպորատիվ և ներդրումային բանկ» ԲԸ, գործադիր տնօրեն:

Փորձառությունը՝ 28 տարի:

*Ֆիլիպ Դեյմոտոյը հանդիսանում է Խորհրդին կից **Աուդիտի հանձնաժողովի, Ռիսկերի կառավարման հանձնաժողովի** անդամ, ինչպես նաև **Կադրերի և պարզակապրումների հանձնաժողովի** նախագահ:*



Ռուբեն Հովհաննեսի Ինջիկյան՝ անկախ անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 13.02.1951թ.

Կրթությունը՝

1968-1973թթ.՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ (ՄՄՀՊԻ), միջազգային տնտեսագիտական հարաբերություններ մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան, արտաքին առևտրի գծով տնտեսագետի որակավորում

1975-1978թթ.՝ Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտ: 1979թ-ին պաշտպանել է ատենախոսություն և ստացել է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի աստիճան: Ատենախոսության թեման՝ OPEC-ի դերը համաշխարհային կապիտալիստական տնտեսությունում: 1983թ.-ին «Միջազգային հարաբերություններ» հրատարակչության կողմից հրատարակված նույնանուն գրքի հեղինակ:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2023թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ

2013թ.-ից առ այսօր՝ Վեբսթերի համալսարան (Webster University Geneva, մայր համալսարան՝ Webster University, St Louis, Missouri), տնտեսագիտության և կառավարման պրոֆեսոր, ադյունկտ-պրոֆեսոր, կարդում է դասախոսություններ էներգետիկայի, հումքի, առևտրի ֆինանսավորման, թվային տնտեսագիտության մասին, անցկացնում է կուրսեր (օնլայն և արտագնա)

2011թ.-ից առ այսօր՝ միջազգային խորհրդատու, սպիկեր, մոդերատոր, ներթվորքեր (Շվեյցարիա):

Փորձառությունը՝ 33 տարի:

Ռուբեն Ինջիկյանը հանդիսանում է Խորհրդին կից Ներդրումային հանձնաժողովի նախագահ:



Կարինե Աղասու Մինասյան՝ անկախ անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 29.08.1965թ.

Կրթությունը՝

1982-1987թթ.՝ Մոսկվայի Ս. Օրջոնիկիձեի անվան կառավարման ինստիտուտ, ինժեներ-տնտեսագետ, մեքենաշինական արդյունաբերության կառավարման կազմակերպող

Որակավորման բարձրացման տարբեր դասընթացներ, Գ.Պ. Շեդրովիցկու մեթոդաբանական շարժման մասնակից:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2023թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ

2021թ. առ այսօր՝ «Լիգա-Արմենիա» ԱՓԲԸ, Խորհրդի անդամ, թվային փոխակերպություն, բիզնես գործընթացների և կառավարման

համակարգի կատարելագործում

2020թ. առ այսօր՝ Ռուս-Հայկական համալսարանի դասախոս, ինտեգրման ինստիտուցիոնալ հիմքեր, ինստիտուցիոնալ տնտեսագիտության հիմքեր

2016-2019թթ.՝ Կոլեգիայի անդամ (նախարար) ներքին շուկաների, տեղեկատվայնացման և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների գծով/Եվրասիական տնտեսական հանձնաժողով (միջազգային կազմակերպություն), Միության թվային փոխակերպություն, ինֆորմատիզացում, ԵԱՏՄ-ի անդրսահմանային շուկաներում խոչընդոտների վերացում:

Փորձառությունը՝ 35 տարի:

Կարիներ Մինասյանը հանդիսանում է Խորհրդին կից Աուդիտի հանձնաժողովի, ինչպես նաև Ռիսկերի կառավարման հանձնաժողովի նախագահ:

ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Խորհուրդը Բանկի կառավարման կոլեգիալ մարմին է, որն ապահովում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Իր գործունեության ընթացքում Խորհուրդը ղեկավարվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, Բանկի կանոնադրությամբ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի կանոնակարգով և Բանկի այլ ներքին իրավական ակտերով:

2025 թվականի ընթացքում Խորհուրդը գումարել է **42 նիստ**:

ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Բանկի Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծել է հանձնաժողովներ: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն Խորհրդակցական բնույթ:

Հաշվետու տարում Խորհուրդն ունեցել է հետևյալ հանձնաժողովները.

- 1) Խորհրդին կից ներդրումային հանձնաժողով (5 նիստ),
- 2) Խորհրդին կից աուդիտի հանձնաժողով (3 նիստ),
- 3) Խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողով (3 նիստ),
- 4) Խորհրդին կից Անձնակազմի և պարզևատրումների հանձնաժողով:

Հավելված 4. Գործադիր մարմնի (անհատական կամ ընդհանուր) տարեկան վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ

Բանկի Վարչության անդամների տարեկան վարձատրությունը (աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ) ընդհանուր կազմել է 1.488.855 հազ ՀՀ դրամ: Բանկում ղեկավարների և առանցքային աշխատակիցների վարձատրության և պարգևատրումների համակարգը հիմնված է աշխատանքային փորձի, իրավասությունների և պատասխանատվության շրջանակների վրա, ինչպես նաև ներառում է կատարողականի վրա հիմնված բաղադրիչներ:

Վերջին տարիների ընթացքում Բանկում փուլ առ փուլ ներդրվել է կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության գնահատման նոր համակարգ, որի արդյունքներն ամփոփվում են կիսամյակը մեկ: Առանձին կառուցվածքային ստորաբաժանումների համար մշակվել են իրականացված աշխատանքների արդյունավետության գնահատման ցուցանիշներ՝ կախված վերջիններիս համար սահմանված նպատակներից և խնդիրներից: Համակարգը և սահմանված չափանիշները յուրաքանչյուր կիսամյակ ամփոփվում և ըստ անհրաժեշտության վերանայվում ու լրամշակվում են:

Բանկում առկա են բնապահպանական, սոցիալական և կառավարման ոլորտների զարգացմանը միտված մի շարք ծրագրեր, այս փուլում վերջնական ձևակերպված չեն ամբողջական և չափելի կայունության թիրախներ: Ընթացքում են վերլուծական և միջազգային փորձի ուսումնասիրման աշխատանքները՝ միջնաժամկետ և երկարաժամկետ կայունության համապատասխան թիրախների սահմանման նպատակով:

Հավելված 5. Բանկի բաժնետոմսերի քանակը, որոնք հանդիսանում են խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը

Անուն-ազգանունը	Պաշտոնը	Բաժնետոմսերի քանակը
Գագիկ Զաքարյան	Խորհրդի նախագահ	1524493
Վարդան Աթայան	Խորհրդի անդամ	5483
Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահ-գործադիր տնօրեն	64485

Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ	147444
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն	13000
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ	9648
Դավիթ Պետրոսյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	4768
Գուրգեն Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրաձախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	7183

Հավելված 6. Աուդիտորական կազմակերպության անվանումը և վարձատրությունը, ինչպես նաև դրա անկախության փաստի ստուգման արդյունքները

Բանկն ամբողջությամբ հետևում արտաքին աուդիտին առնչվող Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջներին:

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող ֆինանսական տարվա համար Բանկի արտաքին աուդիտորը եղել է «**ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ**» ՍՊ ընկերությունը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փողոց, 26/1 շենք, 8-րդ հարկ



Հեռ.՝ +374 (10) 59 59 99,

Էլ. հասցե՝ info@kpmg.am, general@kpmg.co.am

Տնօրեն՝ Իրինա Գևորգյան

Համաձայն կնքված պայմանագրի՝ արտաքին աուդիտի ծառայությունների մատուցման համար սահմանված է եղել **57.6 մլն** (հիսունյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ վարձատրություն:

Անկախության փաստի ստուգումը

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերությունն անկախ է Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և Հայաստանի

Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների:

Բանկի կողմից արտաքին աուդիտորի անկախության պահպանման պարտավորությունն ապահովելու նպատակով՝ Աուդիտի հանձնաժողովն իրականացնում է հետևյալ պարտավորությունները՝

- անհրաժեշտության դեպքում ներկայացնել կարծիք Խորհրդին՝ արտաքին աուդիտի անկախության և շահերի ցանկացած հավանական բախումների վերաբերյալ,
- նախապես հավանություն տալ արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից ցանկացած ոչ աուդիտորական ծառայությունների մատուցմանը:

Նման վերահսկողական գործառույթի իրականացման արդյունքում անկախության խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Հավելված 7. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերով ամրագրվող իրավունքները՝ ըստ դրանց տեսակների (դասերի)

Բանկի կանոնադրության համաձայն Բանկը կարող է տեղաբաշխել 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսեր, 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր, 230 (երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր, 390 (երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր:

Բանկի բաժնետերերի իրավունքներն ամրագրված են Բանկի կանոնադրությամբ և օրենսդրությամբ:

Բանկի մեկ սովորական բաժնետոմսը տվյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է ժողովում մեկ ձայնի իրավունք:

Բանկի մեկ արտոնյալ բաժնետոմսը դրա սեփականատիրոջը ժողովում տալիս է մեկ ձայնի իրավունք, եթե քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը, կամ Բանկի կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություն կատարելու մասին հարցերը, որի հետևանքով սահմանափակվում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները:

Արտոնյալ բաժնետոմսերը սովորական բաժնետոմսերով փոխարկելու ժամանակ Բանկը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել դրանք այլ ձևով:

Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի

հետզնումը, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, և նշված բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ նշված խոշոր գործարք կնքելու դեմ, կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել:

- կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկի **սովորական բաժնետոմսերի** սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

- անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի՝ ենթարկվելով օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին,

- անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,
- ստանալ շահաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից՝ ենթարկվելով օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին,
- ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին,
- առաջնահերթության կարգով ձեռք բերել Բանկի կողմից փակ բաժանորդագրությամբ թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը,
- Բանկի կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,
- իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Բանկի **արտոնյալ բաժնետոմսերի** սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

- անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Ժողովին՝ իր իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի՝ ենթարկվելով օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին,

- ստանալ տարեկան շահաբաժին Ժողովի կողմից որոշված չափով և կարգով,
- անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,
- ստանալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված ցանկացած տեղեկատվություն, թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք,
- Բանկի լուծարման դեպքում մնացորդային գույքից ստանալ իր բաժնետոմսի լուծարային արժեքը, որի որոշման կարգը և չափը սահմանում է Ժողովը,
- Բանկի կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,
- իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հավելված 8. Կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկին և խորհրդին խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձանց մասին տեղեկատվությունը և վարձատրությունը

2025 թվականի ընթացքում կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկին և խորհրդին խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձինք չեն ներգրավվել:

Հավելված 9. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՏՐԻՑԱՅՈՎ
ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հաշվետու ժամանակահատված՝ 1 հունվարի 2025թ. - 31 դեկտեմբերի 2025թ.:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը ձգտում է պահպանել կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշները՝ իր գործունեությունը համապատասխանեցնելով ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. թիվ 1955-Ն հրամանով հաստատած Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջներին և միջազգային լավագույն փորձին:

Գլուխ I. Մասնակիցների հիմնական իրավունքներ, հավասար վերաբերմունք մասնակիցների նկատմամբ և նշանակալից մասնակիցների պարտականություններ

ՍԿԶԲՈՒՆՔ I.1. Կազմակերպության կառավարմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

Կազմակերպությունը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից կազմակերպության կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և տեղեկացված որոշում կայացնելու համար:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.1.	Մասնակիցը ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ պատշաճ ծանուցվում է ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն է ունենում ծանոթանալ ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.2.	Ընդհանուր ժողովի հրավիրման վայրն ու օրը (ժամը) չեն սահմանափակում ընդհանուր ժողովին բաժնետիրոջ մասնակցությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.3.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ու ընթացակարգերը հավասար վերաբերմունք են ապահովում միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.4.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ապահովում են ընդհանուր ժողովում ձայների պատշաճ հաշվարկը ու հաշվառումը, ինչպես նաև քվեարկության արդյունքների ժամանակին հրապարակումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.5.	Ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը հրապարակվում են կազմակերպության համացանցային էջում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

I.1.6.	Անկախ քվեարկության կարգից՝ բաժնետերերի ձայներին տրվում է հավասար նշանակություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.7.	Ընդհանուր ժողովում բաժնետերը հնարավորություն ունի հարցեր տալ խորհրդի և գործադիր մարմնի անդամներին, աուդիտորին և ստանալ պատասխան:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.8.	Ընդհանուր ժողովի ընթացքում բաժնետերերը հնարավորություն ունեն հաղորդակցվելու միմյանց հետ՝ քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.9.	Կազմակերպությունը հավասարակշռում է համատեղ ներկայությամբ և հեռավար ժողովների գումարումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ 1.2. Կազմակերպության խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման բաժնետիրոջ իրավունքը

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի մասնակցի արդյունավետ մասնակցությունը խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և խորհրդի անդամների ընտրության գործընթացին:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության իրավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
1.2.1.	Մասնակիցը ողջամիտ ժամկետներում ամբողջական և բավարար տեղեկատվություն է ստանում խորհրդի անդամների թեկնածուների մասնագիտական որակավորման և փորձառության, անցյալում և ներկայում զբաղեցրած պաշտոնների, կազմակերպության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) նշանակալից բաժնետեր լինելու մասին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ 1.3. Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամների վարձատրության քաղաքականությունը

Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կարծիք հայտնել խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
1.3.1.	Կազմակերպությունն ունի խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականություն և ընթացակարգեր:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	Բանկում ներդրված են խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության գործընթացներ, որոնք Կորպորատիվ կառավարման կանոնագրի ընդունմամբ պայմանավորված գտնվում են լրամշակման մեջ:
1.3.2.	Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունը, վարձատրության սխեմաները և դրանց փոփոխությունները խորհրդի առաջարկով հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից, եթե գործադիր մարմնի մասով այդ իրավասությունը վերապահված չէ խորհրդին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	Բանկում Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության կիրառվող մոտեցումների և սխեմաների սահմանումը Կանոնադրության համաձայն պատկանում են խորհրդի իրավասությանը:

ՍԿԶԲՈՒՆՔ 1.4. Շահաբաժին ստանալու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը միևնույն տեսակի (դասի) բաժնեգրման սեփականատերերի համար պետք է ապահովի հավասար և արդար վերաբերմունք մասնակցելու կազմակերպության շահույթի բաշխմանը շահաբաժին ստանալու միջոցով:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
1.4.1.	Կազմակերպությունն ունի շահաբաժինների վճարման քաղաքականություն և դրա կիրառումն ապահովող ընթացակարգեր:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
1.4.2.	Խորհուրդը մշակել և հաստատել է շահաբաժինների վճարման քաղաքականությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
1.4.3.	Շահաբաժինների վճարման ընթացակարգերը ապահովում են հավասար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ 1.5. Նշանակալից բաժնետիրոջ պարտականությունները

Կազմակերպությունն ի շահ նշանակալից մասնակիցների կամ անմիջականորեն նշանակալից մասնակիցների կողմից կատարվող չարաշահումներից պետք է պաշտպանի փոքր բաժնեմասնակցություն ունեցող մասնակիցներին:

Հայտարարագրում

	Չափորոշիչ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
1.5.1.	Կազմակերպության նշանակալից բաժնետերը բացահայտում է կազմակերպության հետ կնքվող գործարքներում կամ կազմակերպության վրա ուղղակիորեն ազդող հարցերում իր ուղղակի, անուղղակի կամ երրորդ անձանց անունից հանդես գալու իր հնարավոր էական շահը և չի մասնակցում տվյալ գործարքի կամ հարցի հետ կապված որոշման ընդունմանը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

I.5.2.	Կազմակերպության նշանակալից բաժնետերը բացահայտում է խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած փոխկապակցվածությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
--------	---	-------------------	--------------------------	--------------------	--

Գլուխ II. Խորհուրդ

ՍԿԶԲՈՒՆՔ II.1. Խորհրդի առանցքային գործառույթները

Կազմակերպությունը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական խորհրդի կողմից, որի դերն է նպաստել կազմակերպության երկարաժամկետ հաջողությանը, մասնակիցների համար արժեքի ստեղծմանը և կազմակերպության շահակիցներին աջակցմանը:

Հայտարարագրում

	Չափորոշիչ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.2.1.	Խորհուրդն իրականացնում է Կանոնագրքով իրեն վերապահված գործառույթները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ II.2. Խորհրդի կազմը

Խորհրդի անդամները պետք է ունենան միմյանց լրացնող մասնագիտական փարաբեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն:

Խորհրդի գործունեության արդյունավետության և որոշումների օբյեկտիվության ու հավասարակշռվածության ապահովման նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի խորհրդի կազմի բազմազանությունը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.2.1.	Կազմակերպությունը սահմանել է խորհրդի և գործադիր մարմնի բազմազանության քաղաքականություն և բազմազանության նպատակային ցուցանիշներ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	Բանկի Խորհուրդը բաղկացած է համապատասխան և փոխլրացնող հմտություններ ունեցող անձանցից, և քայլեր են ձեռնարկվել գենդերային ներկայացվածությունը բարելավելու ուղղությամբ՝ 2023թ.-ից Խորհրդի կազմում ներգրավելով կին անդամ: Բանկը դեռ չի ընդունել պաշտոնական բազմազանության քաղաքականություն և ներկայումս չի բավարարում 30% գենդերային ներկայացվածության թիրախը:

II.2.2.	Խորհրդի անդամներն ունեն միմյանց լրացնող մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
---------	---	-------------------	--------------------------	--------------------	--

ՍԿԶԲՈՒՆՔ II.3. Խորհրդի ոչ գործադիր անդամները

Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն գործադիր մարմնին, ուղղորդեն կազմակերպության ռազմավարական զարգացումը, գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդարկական աջակցությունը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.3.1.	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհրդում մեծամասնություն են կազմում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.3.2.	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհուրդ են բերում նոր փորձառություն, ընկալում են կազմակերպության մարտահրավերները և աջակցում ռազմավարական զարգացման հարցերում, վերահսկում և գնահատում են գործադիր մարմնին և դրա կատարողականը, ապահովում են ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ձևավորումը, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, խորհրդի գնահատման պրակտիկայի ձևավորումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ II.4. Խորհրդի անկախ անդամները

Խորհուրդը պետք է դիտարկի բավարար թվով խորհրդի անկախ անդամների առաջադրման հարցը, որոնք ունակ են կապարել անկախ դատողություններ:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.4.1.	Կազմակերպության խորհրդի անդամների 1/3-ը անկախ անդամներ են:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

II.4.2.	Խորհուրդը տարեկան կտրվածքով իրականացնում է անկախ անդամների անկախության չափանիշներին համապատասխանության վերլուծություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.4.3.	Խորհրդի անդամի անկախության ապահովմանը միտված սահմանափակումները գործում են խորհրդի անդամի պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ II.5. Խորհրդի նախագահը

Խորհուրդը ղեկավարում է նախագահը, ով պարասխանաբար է խորհրդի արդյունավետ գործունեության համար: Նախագահը պետք է ունենա անկախ և անաչառ դարողություն, խթանի խորհրդի և կազմակերպության գործունեության թափանցիկությունն ու խորհրդում քաջալերի բանավեճի մշակույթը:

Նախագահը պետք է նպաստի խորհրդի գործադիր և ոչ գործադիր անդամների միջև կառուցողական հարաբերությունների ձևավորմանը և ապահովի, որ խորհրդի ոչ գործադիր անդամները տեղեկացված որոշումներ կայացնելու համար ժամանակին ստանան ճշգրիտ ու էական տեղեկատվություն:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.5.1.	Խորհրդի նախագահն ապահովում է խորհրդի ղեկավարումը և իրականացնում է Կանոնագրքով իրեն վերապահված գործառույթները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.5.2.	Խորհրդի նախագահը խորհրդի ոչ գործադիր անդամ է:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ II.6. Խորհրդի հանձնաժողովները

Իր գործունեությանն աջակցելու համար խորհուրդը ձևավորում է մասնագիտացված հանձնաժողովներ:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.1.	Խորհրդին կից ձևավորվել է աուդիտի հանձնաժողով:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.2.	Աուդիտի հանձնաժողովն ունի վերահսկողական և խորհրդատվական դերեր: Խորհուրդն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում իր որոշումների համար:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.3.	Խորհուրդը հաստատել է աուդիտի հանձնաժողովի առաքելությունը, կազմը, գործունեության շրջանակներն ու ընթացակարգերը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.4.	Աուդիտի հանձնաժողովը հաշվետու է խորհրդին և խորհրդի կողմից սահմանված ձևաչափով ու պարբերականությամբ հաշվետվություններ են ներկայացնում դրան:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.5.	Իր պարտականությունները կատարելու համար աուդիտի հանձնաժողովները ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

II.6.6.	Աուդիտի հանձնաժողովը կազմված է բացառապես խորհրդի ոչ գործադիր անդամներից:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.7.	Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը խորհրդի անկախ անդամ է:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.8.	Աուդիտի հանձնաժողովի նախագահը խորհրդի անկախ անդամ է:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.9.	Աուդիտի հանձնաժողովի նախագահին ընտրվել է խորհրդի կողմից:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.10.	Խորհրդի նախագահի և աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն համատեղվում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.6.11.	Աուդիտի հանձնաժողովի անդամներն ունեն կազմակերպության գործունեության ոլորտին առնչվող գիտելիքներ, իսկ առնվազն մեկը՝ համապատասխան ֆինանսական գիտելիքներ ու փորձառություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

II.6.12.	Աուդիտի հանձնաժողովն իրականացնում է Կանոնագրքով նախատեսված գործառույթները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
----------	--	-------------------	--------------------------	--------------------	--

ՍԿԶԲՈՒՆՔ II.7. Խորհրդի անդամների պարտականությունները

Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.7.1.	Խորհրդի անդամը գործում է օրենսդրությամբ և կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված իր իրավասությունների շրջանակում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.7.2.	Խորհրդի անդամը բավարար ժամանակ և ջանքեր է գործադրում իր պարտականությունները պատշաճ կատարելու համար:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.7.3.	Խորհրդի անդամն իր պարտականությունները կատարում է անձամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

II.7.4.	Խորհրդի անդամը հայտնում է կազմակերպության կողմից կնքվող գործարքում կամ ձեռքբերվող պայմանավորվածություններում անձնական ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն ունենալու վերաբերյալ և ներկա չի գտնվում գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանն ու քվեարկությանը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
---------	--	-------------------	--------------------------	--------------------	--

ՍԿՋԲՈՒՆՔ II.8. Խորհրդի էթիկական հանձնառությունը

Խորհուրդը պետք է հետևի բարձր էթիկական չափորոշիչների:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.8.1.	Խորհուրդն ունի կազմակերպության կորպորատիվ էթիկական կառավարելու և հակակոռուպցիոն համապատասխանությունն ապահովելու հստակ հանձնառություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.8.2.	Խորհուրդը նախաձեռնել է կազմակերպությանը ներհատուկ կոռուպցիոն ռիսկերի գնահատումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.8.3.	Խորհուրդը հաստատել է կազմակերպության կորպորատիվ վարքականոնները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.8.4.	Խորհուրդը հետևում է, որ կազմակերպության աշխատակիցների համար կազմակերպվեն կորպորատիվ վարքականոնների ներածական ուսուցումներ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	Համապատասխան գործընթացը սկսվել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունմամբ

ՍԿԶԲՈՒՆՔ II.9. Տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալու խորհրդի անդամների իրավունքները

Իր պարտականությունները պարզաճ կատարելու համար խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա և համոզված լինի, որ ստանում է արդիական, հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում նա պետք է հնարավորություն ունենա կազմակերպության միջոցների հաշվին ներգրավել արտաքին անկախ խորհրդատվություն:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.9.1.	Խորհրդի անդամները պատշաճ ծանուցվում են նիստերի հրավիրման վերաբերյալ, ողջամիտ ժամկետներում ստանում են նիստի օրակարգում քննարկվելիք փաստաթղթերն ու տեղեկությունները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.9.2.	Խորհրդի անդամները հասանելիություն ունեն կազմակերպության կորպորատիվ քարտուղարին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ II.10. Խորհրդի գնահատումը

Խորհուրդը կանոնավոր հիմունքներով պետք է գնահատի իր կատարողականը և որոշի իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պարզաճությունը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.10.1.	Խորհուրդն ապահովում է իր ինքնագնահատումը որպես մեկ ամբողջություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

II.10.2.	Խորհուրդն ապահովում է խորհրդի անդամների, նախագահի և հանձնաժողովների կատարողականի անհատական գնահատումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
----------	--	-------------------	--------------------------	--------------------	--

ՍԿԶԲՈՒՆՔ II.11. Խորհրդի անդամների շարունակական մասնագիտական զարգացումը և խորհրդի նոր անդամների կողմնորոշումը

Խորհուրդը պետք է ապահովի իր գիտելիքների և գործունեության համապատասխանությունը կազմակերպության աճին և կառուցվածքի բարդացմանը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.11.1.	Խորհուրդն ապահովում է իր անդամների շարունակական մասնագիտական զարգացումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.11.2.	Խորհրդի նոր անդամների համար անցկացվում են ներածական հանդիպումներ/դասընթացներ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ II.12. Խորհրդի անդամների առաջադրումը

Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացները պետք է լինեն թափանցիկ ու կանոնակարգված: Խորհրդի անդամների ընտրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.12.1.	Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացները թափանցիկ են ու կանոնակարգված:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.12.2.	Խորհրդի կազմը պարբերաբար թարմացվում է՝ երաշխավորելու, որ խորհրդի կարողությունները բավարար են գործարար մարտահրավերներին դիմակայելու համար:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.12.3.	Խորհրդի գործող անդամը առաջադրված թեկնածուների ցանկում գտնվելու (վերընտրվելու) դեպքում ներկայացվում է պատշաճ հիմնավորում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

Գլուխ III. Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ

ՍԿԶԲՈՒՆՔ III.1. Ներքին հսկողություն

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին հսկողության արդյունավետ գործընթացներ ու ընթացակարգեր՝ կազմակերպության կողմից ֆինանսական, ոչ ֆինանսական և հաշվապահական տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու, հաշվեպնդականությունը խթանելու և խարդախությունները կանխելու համար:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
III.1.1.	Կազմակերպության ներքին հսկողության շրջանակները սահմանված են:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

III.1.2	Կազմակերպության գործադիր մարմինն ապահովում է ներքին հսկողության արդյունավետ համակարգի ձևավորումն ու պահպանումը սահմանված շրջանակներում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
---------	---	-------------------	--------------------------	--------------------	--

ՍԿԶԲՈՒՆՔ III.2. Կազմակերպության ռիսկերի կառավարման գործառույթը

Կազմակերպությունը պետք է ունենա ռիսկերի կառավարման գործառույթ, որն արդյունավետորեն և ամբողջությամբ հնարավորություն է տալիս իրագործել ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ապահովում է կազմակերպության ռիսկերի մասին հաշվեպահության նպատակներին ու հաղորդակցությունը և կազմակերպության կողմից իր ռազմավարական նպատակներին հասնելու վերաբերյալ ձևավորում ողջամիտ սպասումներ:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
III.2.1.	Կազմակերպությունում ձևավորվել է ռիսկերի կառավարման գործառույթ, որի նշանակումը, լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացնում է գործադիր մարմինը՝ խորհրդի համաձայնությամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ III.3. Կազմակերպության համապատասխանության ապահովումը

Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխանության ապահովման գործառույթ, որն արդյունավետորեն և ամբողջությամբ հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության համապատասխանության ռիսկը և նպաստել կազմակերպության համապատասխանության ապահովմանը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
III.3.1.	Կազմակերպությունում ձևավորվել է համապատասխանության պատասխանատուի գործառույթ, որի նշանակումը, լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացնում է գործադիր մարմինը՝ խորհրդի համաձայնությամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿՋԲՈՒՆՔ III.4. Կազմակերպության ներքին աուդիտը

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին աուդիտոր/ներքին աուդիտի ստորաբաժանում, որն անկախ և օբյեկտիվ հավաստիացումներ ու խորհուրդներ է փորձադրում կազմակերպության խորհրդին և գործադիր մարմնին կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման համակարգերի համարժեքության ու արդյունավետության վերաբերյալ և աջակցում կազմակերպության նպատակների իրագործմանն ու գործունեության բարելավմանը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
III.4.1.	Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողները նշանակվում են խորհրդի կողմից: Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումը հաշվետու է խորհրդին, իսկ աուդիտի հանձնաժողովի առկայության դեպքում՝ վերջինիս:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
III.4.2.	Խորհուրդը/աուդիտի հանձնաժողովը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
III.4.3.	Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողները կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամներ ու դրանց հետ փոխկապակցված անձինք չեն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

Գլուխ IV. Տեղեկատվության բացահայտում և թափանցիկություն

ՍԿՋԲՈՒՆՔ IV.1. Կազմակերպության տեղեկատվական քաղաքականությունը

Կազմակերպությունը պետք է ապահովի իր թափանցիկությունը, այդ թվում՝ իր ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, կայունության, սեփականության և կորպորատիվ կառավարման բոլոր էական հարցերի վերաբերյալ արդիական և արժանահավասար տեղեկատվության ժամանակին բացահայտումը:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.1.1.	Կազմակերպությունն ունի տեղեկատվական քաղաքականություն, որն առնվազն նախատեսում է կազմակերպության կողմից տեղեկատվության բացահայտման նպատակները, սկզբունքները, ժամկետները, պարբերականությունը, կարգն ու հաղորդակցման ուղիները, բացահայտման ենթակա տեղեկատվության ցանկը, եթե այն գերազանցում է օրենսդրությամբ նախատեսվածը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.1.2.	Տեղեկատվության տարածման եղանակները մասնակիցների և այլ շահակիցների համար ապահովում են համապատասխան տեղեկատվության հավասար, ժամանակին և տնտեսապես արդյունավետ հասանելիություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.1.3.	Տեղեկատվության պարբերական բացահայտումները ուղեկցվում են կազմակերպության էական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.1.4.	Կազմակերպությունը երաշխավորում գաղտնի, ներքին տեղեկությունների պահպանումը և իր տեղեկատվական անվտանգությունը	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

ՍԿԶԲՈՒՆՔ IV.2. Կազմակերպության հաշվետվությունները

Կազմակերպության կողմից էական հարցերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի տարեկան հաշվետվությունների հրապարակմամբ:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը	Բացատրություն
--	--------	--------------------------------	---------------

IV.2.1.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի նախագահի և գործադիր մարմնի ղեկավարի ուղերձները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.2.2.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է գործադիր մարմնի զեկույցը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.2.3.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.2.4.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է փոխկապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.2.5.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է իրական շահառուների մասին տեղեկատվությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.2.6.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

IV.2.7.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
---------	---	-------------------	--------------------------	--------------------	--

ՍԿԶԲՈՒՆՔ IV.3. Կազմակերպության արտաքին աուդիտորը

Կազմակերպությունը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի անկախ, կոմպետենտ և որակավորված աուդիտորական կազմակերպության կողմից՝ աուդիտի, էթիկայի և անկախության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ խորհրդին ու մասնակիցներին ողջամիտ հավաստիացում տրամադրելու այն մասին, որ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, արժանահավատորեն արտացոլում են դրա ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքներին համապատասխան:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
IV.3.1.	Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են արտաքին աուդիտի:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.3.2.	Կազմակերպությունն ունի արտաքին աուդիտորի/աուդիտորական կազմակերպության ընտրության չափանիշներ և կարգ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.3.3.	Աուդիտորական կազմակերպության թեկնածությունն առաջադրում է խորհուրդը, նշանակում է (հաստատում է) ընդհանուր ժողովը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

IV.3.4.	Արտաքին աուդիտորը հաշվետու է մասնակիցներին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.3.5.	Աուդիտորական կազմակերպությունը ստուգում է կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.3.6.	Աուդիտորական կազմակերպությունը օրենքով չարգելված ոչ աուդիտորական բնույթի ծառայությունները մատուցում է բացառապես խորհրդի թույլտվությամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.3.7.	Կազմակերպության աուդիտի հանձնաժողովն առանց գործադիր մարմնի անդամների մասնակցության հանդիպումներ է ունենում աուդիտորների հետ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	

Գլուխ V. Կազմակերպության հարաբերությունները շահակիցների հետ

ՍԿԶԲՈՒՆՔ V.1. Կազմակերպության շահակիցները կորպորատիվ կառավարման համակարգում

Կազմակերպությունը պետք է ճանաչի իր շահակիցների իրավունքները, դերերն ու շահերը և խրախուսի կազմակերպության, մասնակիցների ու շահակիցների միջև ակտիվ համագործակցությունը, որն ուղղված է արժեքի, այդ թվում՝ որակյալ աշխատատեղեր ստեղծելուն, ինչպես նաև կենսակայուն և դիմակայուն կազմակերպություն ձևավորելուն:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
V.1.1.	Կազմակերպությունն ունի շահակիցների հետ հաղորդակցման քաղաքականություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	Համապատասխան գործընթացը սկսվել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունմամբ, որի հիման վրա սկսվել են քաղաքականության մշակման աշխատանքները